Ագարակ

Բնակչություն՝ 164

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 20 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 950 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Ագարակ գյուղը հիշատակվում է 12-13-րդ դարերից և մտնում էր Սյունիքի աշխարհի Բաղք-Աճանան գավառի մեջ: Ըստ հին հարկացուցակի Տաթևի վանքին տալիս էր 20 միավոր հարկ և համարվում էր Սյունիքի խոշոր բնակավայրերից:
Գյուղում 1931թ. կազմավորվել է կոլտնտեսություն և գյուղխորհուրդ:
Գյուղի շրջակայքում կա երեք հին, 15-17-րդ դարերի գերեզմանոց, տապանագիր ունեցող խաչքարեր, հին գյուղատեղիներ (Գեչուտ և Սիրդարա վայրերում), Սարդարանց և ներկայումս կանգուն՝ 1830թ. կառուցված Օհանա կոչվող եկեղեցիները:
Գյուղի կենտրոնում կառուցված է Երկրորդ Աշխարհամարտում զոհվածների, զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշարձան և խաչքար:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1851 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 674 հա, որից՝
- վարելահող՝ 278 հա, բազմամյա տնկարկ՝ 7 հա, խոտհարք՝ 27 հա, արոտ՝ 268 հա, այլ հողատեսք՝ 94 հա
- բնակավայրերի հողեր՝ 58 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 3 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝3 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2 հա,
- անտառային հողեր 1109 հա, որից անտառածածկ՝ 198 հա
- ջրային հողեր՝ 1 հա,